# Հովհաննես Հովհաննիսյան

## Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա

Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա,
Կախված է ժայռը ջրերի վրա.
Ալիքը կայտառ գնում են գալիս
Եվ ժայռին սիրո համբույր են տալիս:
Խաղում են անհոգ ալիքը գետի,
Ցուցնում են գոկած պատկերն արևի,
Եվ որպես մանուկ ժպիտն երեսին,
Մեղմիկ շշունջով խոսում են ժայռին:

«Լսի՛ր, ծերունի՛, ինչո՞ւ ճակատիդ
Սև կնճիռները չեն տալիս դեմքիդ
Մի օր խնդության շողով ցոլանալ
Ողջը փոխվում է, դու նույն ես դարձյալ:

«Ազատ լեռների ազատ զավակներ»
Մենք քեզ բերել ենք անթիվ գոհարներ.
Երկնքի դստեր վարդի լեռնասուն
Կը ցողենք կուրծքիդ անուշհոտություն:

«Մենք երանավետ քնքուշ նվագով
Կըկոչենք խորքից ձկներն երամով
Եվ ոսկեզօծված գարնան արևից
Քեզ մեր զվարթ պարին զանենք խնդակից:

«Եվ քո ականջին միշտ սիրո երգեր
Մենք արշալույսից կասենք մինչ աստղեր,
Եվ քեզ կըփարենք և քո ծեր կուրծքին
Մենք հանգչել կըտանք մեր քաղցրը կրքին...»

Ալիքը կայտառ գնում են, գալիս,
Սև ժայռը նախկին յուր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաչում
Նա կրկին անշարժ, նա կրկին տրտում...